

Ծանուցում հիվանդներին և ծնողներին պատվաստումների ռեեստրից

Պատվաստումները կամ «ներարկումները» կանխում են լուրջ հիվանդություններ: Տուբերկուլյոզի հայտնաբերման թեստերը (TB) օգնում են որոշել, թե արդյոք վարակված եք այդ հիվանդությամբ: Բացի այդ, դրանք կարող են պահանջվել ուսման կամ աշխատանքի վայր ներկայացնելու համար: Ձեր ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստերի մասին տեղեկությունների գրանցումը կարող է դժվար իրագործելի լինել: Այն հասկապես դժվարանում է տարբեր բժիշկներից պատվաստումներ ստանալու դեպքում: Այսօր բժիշկներն օգտվում են պաշտպանված համակարգչային համակարգից, որը կոչվում է ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ Պատվաստումների ռեեստր: Եթե դուք փոխեք ձեր բժիշկին, ապա նոր բժիշկը կարող է օգտվել ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի ռեեստրը դիտելու հնարավորությունից: Կալիֆորնիայի պատվաստումների ռեեստրում (CAIR) դուք կարող եք սահմանափակել ձեր անձնական տվյալների հասանելիությունը:

Ինչպե՞ս կարող է ռեեստրն օգնել ձեզ

- Այստեղ կպահպանվեն ձեր ստացած պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ գրանցումները (մաշկի/կրծքավանդակի ռենտգեն հետազոտության թեստերը), այնպես որ դուք բաց չեք թողնի դրանցից որևէ մեկը կամ չափից շատ չեք ստանա դրանք
- Ձեզ կուղարկվեն ծանուցումներ՝ ձեր կամ ձեր երեխայի պատվաստում/թեստ անցնելու վերաբերյալ
- Դուք կստանաք պատվաստում/թեստ անցնելու վերաբերյալ բժշկական տեղեկանքի պատճենը
- Դուք կկարողանաք ապացույց ներկայացնել պատվաստումների/ տուբերկուլյոզի թեստերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են երեխայի խնամքի, դպրոցի կամ նոր աշխատանքի անցնելու ժամանակ:

Ինչպե՞ս է ռեեստրն օգնելու ձեր առողջապահական խնամքն իրականացնող անձնակազմին

Բժիշկները, բուժքույրերը, առողջապահական խնամքի ծրագրերը և պետական առողջապահական հաստատություններն օգտվելու են ռեեստրից ստորև դեպքերում.

- Տեսնելու են, թե ինչ պատվաստումներ/տուբերկուլյոզի թեստեր են անհրաժեշտ
- Կլանխարզել են հիվանդությունները ձեր համայնքում
- Կհիշեցնեն ձեզ անհրաժեշտ պատվաստումներ անցնելու վերաբերյալ
- Կօգնեն վարել հաշվառումը

Կարո՞ղ են արդյոք դպրոցները կամ այլ հաստատություններ տեսնել ռեեստրը

Այո, սակայն սահմանափակ ձևաչափով: Կալիֆորնիայի օրենքով դպրոցներին, մանկապարտեզներին և այլ հաստատություններին թույլատրվում է

- Տեսնել, թե ինչ ներարկումներ/տուբերկուլյոզի թեստեր են անհրաժեշտ երեխաներին
- Հավաստիանալ, որ երեխաները համապատասխանում են պատվաստումների և տուբերկուլյոզի թեստերի պահանջներին, որոնք անհրաժեշտ են երեխայի խնամքի կամ դպրոց հաճախելու համար

Ո՞ր տեղեկությունները կարող են բացահայտված լինել ռեեստրում

- հիվանդի անունը, սեռը և ծննդյան ամսաթիվը
- որոշ տեղեկություններ հիվանդի նույնականացման վերաբերյալ



- ծնողների կամ խնամակալների անունները
- մանրամասն տեղեկություններ հիվանդի ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստերի կամ բուժական բացառությունների վերաբերյալ

Ռեեստրի գրանցամատյանում մուտքագրված ցանկացած տեղեկություն դիտվում է որպես այլ մասնավոր բժշկական տեղեկատվություն: Ռեեստրից օգտվելու չարաշահումը կարող է պատժվել օրենքով: Կալիֆոռնիա նահանգի օրենսդրության համաձայն, ձեր հասցեն և հեռախոսահամարը իրավասու են տեսնել միայն ձեր բժշկի գրասենյակը, առողջապահական ծրագիրը կամ պետական առողջապահական բաժանմունքը: Առողջապահության ոլորտի պաշտոնյաները նույնպես կարող են օգտվել ռեեստրից՝ ելնելով հանրային առողջության պաշտպանության շահերից:

Հիվանդի և ծնողների իրավունքները

Օրենքով ձեզ իրավունք է վերապահված պահանջել ձեր մատակարարից

- արգելել այլ ծառայություն մատուցողների և դպրոցների մուտքը Ձեր (կամ ձեր երեխայի) ռեեստրի գրառումներին
- պատվաստումների վերաբերյալ ծանուցումներ չուղարկել ձեզ
- ձեր կամ ձեր երեխայի ստացած պատվաստումների/տուբերկուլյոզի թեստեր անցնելու վերաբերյալ բժշկական տեղեկանքի պատճենը
- տեղեկացնել, թե ով է ծանոթացել ձեր մասին գրառումներին և սխալի առկայության դեպքում՝ ուղղում մտցնել դրանց մեջ

CAIR-ի մաս դառնալու համար որևէ գործողություն պետք չէ ձեռնարկել: CAIR այլ ծառայություն մատակարարները, դպրոցները և բուժաշխատողները կարող են ավտոմատ մուտք գործել ձեր կամ ձեր երեխայի գրառումներին:

Եթե ցանկանում եք սահմանափակել նրանց թիվը, ովքեր կարող են տեսնել ձեր կամ ձեր երեխայի վերաբերյալ գրառումները, ապա

1. Դիմեք ձեր ծառայություն մատակարարին՝ պարզելու համար, թե արդյոք նրանք կարող են արգելափակել CAIR-ում ձեր վերաբերյալ գրառումները
2. Եթե ձեր ծառայություն մատուցողը չի կարող դա անել, ապա լրացրեք Իմ CAIR գրառումների արգելափակման ձևը՝ CAIRweb.org/cair-forms կայքէջից:
3. Եթե մտափոխվել եք, ապա լրացրեք Իմ CAIR գրառումների արգելափակումից հանելու ձևը:
4. Ուղարկեք դրանց սպագիր ձևերը 1-888-436-8320 ֆաքսի համարին կամ էլեկտրոնային փոստի CAIRHelpDesk@cdph.ca.gov հասցեին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք CAIR-ի աջակցության ծառայությանը՝ 800-578-7889 հեռախոսահամարով կամ գրեք CAIRHelpDesk@cdph.ca.gov էլեկտրոնային հասցեին: